14°. Եթէ ոք 'ի Խորհրդականաց ընդդէմ օգտի Սուրբ Աթոռոյն և հակառակ կամաց ազգին զերկպառակութիւնս և ատելութիւնս կամիցի արկանել 'ի մէջ Խորհրդական եղբարց, և կողմնապահութեամբ իմն միայն զօգուտն անձին իւրոյ և իւրայնոցն Ջանասցի յառաջացուցանել, զայնպիսին (ըստ Աւետարանական բանին) յետ երկիցս և երիցս սիրով խրատելոյ եղբարց, 'ի չդալն յուղղութիւն, անպատճառ բարեմիտ միւս Խորհրդականքն հանեալ 'ի պաշտօնէն, և զարժանաւորն կարգեալ 'ի տեղի նորա, ծանուցեն աստ մեզ։

15°. Ցաղագս Աթոռոյն հարկաւոր գործոց Մասլահաթի մի ոք 'ի Խորհրդականաց առանձին գրեսցէ 'ի Պոլիս առ մեզ հասարակ, կամ առ մի ոք 'ի մէնջ, կամ առ բարեկամս և ծանօթս և ազգականս իւր, այլ միակամ խորհրդով եօթանեքին կնքով իւրեանց և ստորագրութեամբ զմի միայն գիր գրեսցեն, եւ զպատասխանին 'ի մէնջ առցեն մերս գրով և կնքով 'ի ձեռն տեղւոյս Վէքիլին Ս. Աթոռոյդ, ապա թէ ոչ՝ անընդունակ լիցի և դատեսցի։

16°. Ըստ սովորութեան նախնեաց՝ Պատրիարքն միակամութեամբ Խորհրդականաց ժողով արասցէ 'ի տարին երկիցս յատեան Ս. Եկեղեցւոյն, ուր ըստ աստիճանաց իւրաքանչիւր դասուց միաբանութեան սիրով և ահացուցիչ բանիւք խրատ եւ պատուէր տացէ, լինել համեստս, պարկեշտս, ուսումնասէրս, պաշտօնասէրս, կարգապաշտըս, սպասաւորս սրբութեանց տեղեաց ըստ կարգի եւ աստիճանի, և մի՛ լինել ծոյլ, պղերդ, գինեմոլ, կռուարար ընդ եղբարս և ընդ ուխտաւորս, և ընդ այլ ազգս (և եթէ 'ի նոցանէ դրդիցի ինչ խռովութիւն կռուառիթ, ցուցցեն և ծանուսցեն իսկոյն Խորհրդարանին)։ մի լինել պճնասէր, անվայել հանդերձիւք մի շրջիլ 'ի սենեակս ուխտաւորաց եւ 'ի տունս Քաղաքացւոց, մի անուղղայ գնացիւք իւրեանց և անպատեհ խօսիւք դայթակղեցուցանել զպարզամիտս, մի գրել առ իւրեանցն և առ այլս զայն, որ չէ անկ ինքեանց և այլն։ Այլ սիրով և յօժարութեամբ հնազանդիլ Ս. Աթոռոյն և աթոռական Վերակացուաց, այսինքն Ս. Պատրիարքին եւ անձնադիր Խորհրդականաց, գոհութեամբ ընթրել յառաւօտ և յերեկոյ 'ի սեղանատան միաբանու-